



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 124-Ա
30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թ.

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 9
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը նիստի օրակարգը հաստատելու մասին, համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Կապան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 9 արտահերթ նիստի օրակարգը.

1. Կապան համայնքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու և Կապան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 5-ի N 107-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի վարչական տարածքում շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվության տրամադրման պայմանները և կարգը սահմանելու մասին

3. Կապան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

4. Կապանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների հավելավճարի կիրառման կարգը և չափերը հաստատելու և Կապան համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 80-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

6. Համայնքի սեփականություն համարվող գույքի 2020թ. գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին

7. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին

8. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին

9. ՀՀ Սյունիքի մարզի կապան համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների կառավարման 2021թ. և 2021-2023թթ. ծրագրերը հաստատելու մասին

10. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն համարվող հողերի կառավարման 2021 թվականի ծրագիրը հաստատելու մասին

11. Կապան համայնքի վարչական սահմաններում գտնվող, որպես «անհայտ» քաղաքացիների սեփականություն փոխանցված հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

12. Կապան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին

Կողմ (10)
ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ
ԱՍՐՅԱՆ ՎԱԶԵ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ

ԿԱՐԱԳԵՏՅԱՆ ՄԱՆԱՍ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄԵՍՐՈԳՅԱՆ ՆԱԳՈՒԵՈՆ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

Դեմ (0)
Ձեռնպահ (0)
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ



2020թ. դեկտեմբերի 30
ք. Կապան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 125-Ն
30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թ.

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 107-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒՃԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, 19-րդ և 20-րդ կետերով, «Տեղական տուրքերի և լճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ և 4-րդ գլուխների պահանջներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Կապան համայնքի ավագանին *n p n z m i* է.

1. 2021 թվականի ռամար Կապան համայնքի վարչական տարածքում սահմանել տեղական տուրքերի հետևյալ տեսակներն ու դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված մարտարևադարձայինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տներ/, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական

և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **15000 դրամ,**
 բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **30000 դրամ:**

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **50000 դրամ:**

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **50000 դրամ:**

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **100000 դրամ:**

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **3000 դրամ:**

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես

ունեցող շենքերի և շինությունների համար՝

5000 դրամ:

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարելավման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գարարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝

ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում

կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն

3000 դրամ:

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գարարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն որոշման իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման

թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝

5000 դրամ:

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

200000 դրամ:

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

60000 դրամ:

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

50000 դրամ:

7) համայնքի վարչական տարածքում ողելից և ավրոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների էամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝

ա. ողելից և ավրոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մե.որ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և

- ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **10000 դրամ:**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **12000 դրամ:**
 - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **18000 դրամ:**
 - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **25000 դրամ:**
 - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **40000 դրամ:**
 - 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **100000 դրամ:**
- բ. օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **8000 դրամ:**
 - 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **11000 դրամ:**
 - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **14000 դրամ:**
 - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **21000 դրամ:**
 - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **26000 դրամ:**
 - 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **46000 դրամ:**
- 8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ
- քառակուսի մետրի համար՝ **350 դրամ**
- 9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝
- ա. առևտրի օբյեկտների համար՝ **25000 դրամ,**
 - բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **100000 դրամ,**
 - գ. բաղնիքների (սաունաների) համար՝ **200000 դրամ,**
 - դ. խաղատների համար՝ **500000 դրամ,**
 - ե. շահումով խաղերի համար՝ **500000 դրամ,**
 - զ. վիճակախաղերի համար՝ **100000 դրամ.**
- 10) համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
- ա. հիմնական շինությունների ներսում՝
 - մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **5000 դրամ:**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **8000 դրամ:**
 - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **14000 դրամ:**
 - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **20000 դրամ:**
 - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **30000 դրամ:**
 - 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **50000 դրամ:**
- բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **1000 դրամ:**
 - 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **2000 դրամ:**
 - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **4000 դրամ:**
 - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **6000 դրամ:**
 - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **10000 դրամ:**
 - 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **16000 դրամ:**

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվութ. ունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

- ա. ակոնոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **2000 դրամ,**
- բ. թունդ ակոնոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **3500 դրամ,**
- գ. սոցիալական գովազդի համար՝ **0 դրամ,**
- դ. այլ արտաքին գովազդի համար՝ **1500 դրամ,**
- ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով –

375 դրամ,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ի չափով – **150 դրամ:**

12) Կապան համայնքի խորհրդանիշերը (գլխանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **100000 դրամ.**

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ **10000 դրամ.**

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակառարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **500000 դրամ**:

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **2500000 դրամ**,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **5000000 դրամ**,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **7000000 դրամ**,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **10000000 դրամ**:

16) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝

օրացուցային տարվա համար՝ **50000 դրամ**,

17) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում **20000 դրամ**,

բ. հեստապարային ակունքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում՝ **300000 դրամ**:

2. Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերությունների համար տուրքի դրույքաչափի համար կիրառել «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված 2,0 գործակիցը, բացառությամբ Կապան էամայնքում ընդգրկված գյուղական բնակավայրերի համար:

3. Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության և 2-րդ ենթակետի «ա» պարբերության համար տուրքի դրույքաչափի համար կիրառել «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված 3,0 գործակիցը:

4. Որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետի համար տուրքի դրույքաչափի համար կիրառել «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված 0,75 գործակիցը:

5. Որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետի, 9-րդ ենթակետի, 10-րդ ենթակետի «ա» պարբերության 5-րդ և 6-րդ նախադասությունների, 17-րդ ենթակետի «ա» պարբերության համար տուրքի դրույքաչափի համար կիրառել «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված 1,5 գործակիցը:

6. Որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետի համար գյուղական բնակավայրերում տուրքի դրույքաչափի համար կիրառել «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված 0,3 գործակիցը, Կապան քաղաքի Վաչագան, Բաղաբորջ, Բարաբաթում, Բեխ, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ թաղամասերում տուրքի դրույքաչափի համար կիրառել «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված 0,5 գործակիցը /բացառությամբ Մ-2 մայրուղու եզրագծին հարող վաճառքի կետերի/:

7. Որոշման 1-ին կետի 14-րդ ենթակետի համար տուրքի դրույքաչափի համար կիրառել «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված 0,5 գործակիցը:

8. Որոշման 1-ին կետի 15-րդ ենթակետի համար տուրքի դրույքաչափի համար կիրառել «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված 0,3 գործակիցը:

9. Կապան համայնքի վարչական տարածքում սահմանել տեղական վճարների հետևյալ տեսակներն ու դրույքաչափերը՝

1) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրս կանացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. **7000 դրամ,**

2) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. **5000 դրամ**

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար **3000 դրամ**

4) համայնքի կողմից յազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. **5000 դրամ**
յուրաքանչյուր մասնակցից
յուրաքանչյուր դիտորդից՝ **500 դրամ**

5) Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմա վերաբերող համար աղբահանության վճարի չափը, շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար վճարի չափը, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարի չափը և դրանց արտոնությունների տրամադրման պայմանները սահմանվում են «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում՝ **համաձայն թիվ 1 հավելվածի:**

6) համայնքային ենթակայության մանկապարտեզների (նախադպրոցական ուսումնական հաստատությունների) և արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (Էրաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարները և դրանց հավաքագրման կարգը սահմանվում են **համաձայն թիվ 2 հավելվածի:**

7) համայնքային ենթակայության կազմակերպությունների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարները և դրանց հավաքագրման կարգը սահմանվում են **համաձայն թիվ 3 հավելվածի:**

8) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ **1000 դրամ**

9) Համայնքի տարածքում տեղակայված անշարժ գույքի հասցեավորման համար մատուցված ծառայության դիմաց՝
ա. Կապան քաղաքի համար /բացառությամբ Վաչագան, Բաղաբուրջ, Բարաբաթում, Բեխ, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ թաղամասեր/ **5000 դրամ**

բ. Կապան համայնքում ընդգրկված գյուղերի և Կապան քաղաքի Վաչագան, Բաղաբուրջ, Բարաբաթում, Բեխ, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ թաղամասերի համար՝ **2000 դրամ,**

10) Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի աշխատավայրից դուրս քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումները կատարելու դեպքում տեղական վճար՝ **30000 դրամ,**

11) համայնքի վարչական տարածքում, սակայն բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումների անցկացնելու համար՝

ա. մեծ տաղավարների համար **5000 դրամ,**

բ. փոքր տաղավարների համար **3000 դրամ:**

9.1 Սահմանել, որ տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյանները վարվում են էլեկտրոնային ձևով (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով):

10. 2021 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած ճանաչել Կապան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 05-ի «Կապան համայնքում տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափեր սահմանելու մասին» N 107-Ն որոշումը:

11. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Կողմ (10)

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ

ԱՍՐՅԱՆ ՎԱԶԵ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԳԱՆ

ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ

ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՆԱՍ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

Դեմ (0)

Ձեռնդրահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ



2020թ. դեկտեմբերի 30

ք. Կապան



ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂՔԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՐԱԶՎՈՒՄ

1. Բնակելի նպատակային նշանակության շենքերում և /կամ/ շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է՝

1) ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայքնում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 250 դրամ,

2. Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և /կամ/ շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

1) առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 75 դրամ,

2) հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների /ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների/, հանգստի տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20 դրամ

3) վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 դրամ,

4) գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրճնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 դրամ, իսկ զբոսանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 8 դրամ,

5) արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով /այդ թվում՝ ավտոկայանատեղի/՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 դրամ,

6) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն 2-րդ կետի 1-5 ենթակետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարի չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է 2-րդ կետի 1-5 ենթակետերով սահմանված դրույքաչափերով:

7) շինություններում /այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում/, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է 2-րդ կետի 1-5 ենթակետերով սահմանված դրույքաչափերով:

2.1 Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 դրամ,

2.2 Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չի իրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին:

3. Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն հավելվածի 2-րդ կետի 1-5-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝

1) Ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 դրամ, կամ

2) Ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10 000 դրամ:

3) Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքի և /կամ/ շինության սեփականատերը անհամաձայնության մասին գրավոր ներկայացնում է համապատասխան համայնքի ղեկավարին՝ աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

4. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվության համար դրույքաչափը սահմանվում է կոնկրետ հւշվարկված եզրաչափի աղբի քանակի համար սույն հավելվածի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի դրույքաչափերով հաշվարկված աղբահանության վճարի 20 տոկոսի չափով:

Աղբի հավաքման և փոխադրման թույլտվությունը կարող է տրամադրվել նաև շինարարական և խոշոր եզրաչափի աղբի աղբահանության վճար վճարողներին՝ աղբն ինքնուրույն հավաքելու և փոխադրելու համար:

5. Աղբահանության վճար վճարող առանձին կատեգորիայի անձանց համար սահմանվում են արտոնություններ՝

1) Հայրենական Մեծ Պատերազմի վետերանների և զոհված ազատամարտիկների ընտանիքների համար – 100 տոկոսի չափով,

2) Բազմաշունչ /7 և ավելի/ ընտանիքների համար – 50 տոկոսի չափով,

3) Համայնքային ենթակայության կազմակերպություններն ազատվում են աղբահանության վճարներից:

Աշխատակազմի քարտուղար՝  Նևյի Եսինազարյան



ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱԽԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՉՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՑՔԱԶԱՓԵՐԸ

1. Համայնքի նախադպրոցական կրթության հաստատությունների ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի ամսական դրույքաչափը սահմանվում է **4000 դրամ:**

2. Համայնքի Արծվաձիկ, Ծավ և Դավիթբեկ բնակավայրերի նախադպրոցական ուսումնական հաստատությունների ծառայություններից օգտվողների համար կիրառվում է 50%-ի չափով գեղչ և համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի ամսական դրույքաչափը սահմանվում է **2000 դրամ:**

3. Համայնքի արտադպրոցական դաստիարակության երաժշտական հաստատությունների ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների ամսական դրույքաչափերը սահմանվում են ըստ բաժինների՝

- 1) դաշնամուրային **2500 դրամ**
- 2) լարային գործիքների /բացառությամբ թավջութակ և ալտ/ **2000 դրամ**
- 3) փողային և հարվածային գործիքների /բացառությամբ շեփոր/ **1600 դրամ**
- 4) երգեցողության **1600 դրամ**
- 5) ժողովրդական գործիքներ, թավջութակ, ալտ և շեփոր **անվճար**
- 6) կիթառ **2000 դրամ:**

4. Երկրորդ գործիք, երգեցողություն ուսուցանելու դեպքում սահմանվում է լրացուցիչ **500 դրամ**

5. Առավել շնորհալի և հաստատության կրթական ծրագիրը ավարտելուց հետո երաժշտական կրթությունը շարունակել ցանկացող շրջանավարտների համար համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների ամսական դրույքաչափերը սահմանվում են ըստ բաժինների՝

- 1) դաշնամուրային **3000 դրամ**
- 2) լարային գործիքներ /բացառությամբ թավջութակ և ալտ/ **2500 դրամ**
- 3) փողային և հարվածային գործիքներ /բացառությամբ շեփոր/ **2000 դրամ**
- 4) երգեցողություն **2000 դրամ**
- 5) ժողովրդական գործիքներ, թավջութակ, ալտ և շեփոր **անվճար**

6. Համայնքի արտադպրոցական դաստիարակության արվեստի և գեղարվեստի դպրոցների ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների ամսական դրույքաչափերը սահմանվում են ըստ բաժինների՝

- 1) Պարարվեստի, թատերական արվեստի բաժիններում **1600 դրամ**
- 2) Կերպարվեստի և դեկորատիվ կիրառական արվեստի բաժիններում **1600 դրամ**

7. Համայնքի Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի և Մշակույթի կենտրոնի ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցված

ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի ամսական դրույքաչափը սահմանվում է՝

500 դրամ

8. Համայնքի մարզադպրոցների ծառայություններից օգտվողների համար /բացառությամբ մարմնամարզություն և շախմատ/ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի ամսական դրույքաչափը սահմանվում է՝

0 դրամ

2000 դրամ

8.1. Մարմնամարզություն և շախմատ

9. Հայտարարված համաճարակային, բնակլիմայական և այլ պատճառներով ուսումնական պարապմունքները դադարեցնելու ընթացքում վճար չի գանձվում:

10. Համայնքային ենթակայության նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների դրույքաչափերի նկատմամբ սահմանվում է 100% զեղչ՝ բնակչության առանձին խմբերի համար՝

1) զոհված և վիրավոր ԼՂՀ առանցքայինների երեխաներ

2) երկկողմ ծնողազուրկ երեխաներ

3) Հաշմանդամ երեխաներ

4) Չորս և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքի երեխաներ

11. Մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների գանձման գործառույթները վերապահվում են նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակության համապատասխան ՀՈԱԿ-ներին:

11. Վճարների գանձման ժամկետ սահմանել մինչև ծառայությունների փաստացի մատուցման ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

12. Թույլատրելի համայնքի ղեկավարին՝

1) ընդունել անհատական որոշումներ նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպություններ հաճախող անապահով ընտանիքների երեխաների համար վճարի դրույքաչափի 50%-ի չափով զեղչ սահմանելու մասին:

2) նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակության կազմակերպությունների կողմից բնակչությանը վճարովի ծառայություններ մատուցելու դեպքում հաստատել դրանց ցանկը, իրականացման կարգը և վճարների չափը:

Աշխարակազմի քարտուղար *S. @ @ @ @ @* Նեղի Ծահնագարյան



**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՄԱՏՈՒՅՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ**

ՓՈՒՏՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ

Համայնքային ենթակայության կազմակերպությունների կողմից բնակչությանը մատուցվող հանգստի կազմակերպման ծառայությունների դիմաց սահմանվում են փոխհատուցման վճարի հետևյալ դրույքաչափերը.

1. «Կապան քաղաքի մանկական զբոսայգի» ՀՈԱԿ-ում

1) զվարճահարմարանքների /կարուսելների և ատրակցիոնների/ տոմսի արժեքը սահմանվում է

- ա. Մանկական «Ռամաշլա» - 100 դրամ
- բ. Ճոճանակ «Բերյոզկա» - 100 դրամ
- գ. Մանկական նավակներ «Յունգա» - 100 դրամ
- դ. «Որախ բլուրներ» - 100 դրամ
- ե. «Ռամաշլա» - 100 դրամ
- զ. փչովի բառուտ - 10 րոպեն՝ 200 դրամ

2) քացօթյա դահլիճում կազմակերպվող միջոցառումների համար վճար չի սահմանվում,

3) հասարակական զուգարանից օգտվելու վճարը՝ 1 անձի համար - 50 դրամ:

2. Կապան քաղաքի «Մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի դահլիճում կինոցուցադրումներ կազմակերպելու համար տոմսերի արժեքը սահմանել՝

1) ցերեկային՝ ժամը 12:00-ից մինչև 16:00 200 դրամ

2) երեկոյան՝ ժամը 16:00-ից հետո 1000 դրամ

3. Համայնքի սեփականություն համարվող գույքը՝ արտադարձրացական դաստիարակության կազմակերպությունների և մշակույթի օջախների դահլիճները, սրահները և այլ տարածքները մարզամշակութային, հասարակական միջոցառումների կազմակերպման նպատակով իրավաբանական և ֆիզիկական անձանց տրամադրելու համար սահմանել փոխհատուցման վճարի հետևյալ դրույքաչափերը՝

1) Կապան քաղաքի մշակույթի կենտրոն ՀՈԱԿ-ում

ա. համերգային և զվարճանքի այլ միջոցառումների կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր համերգի համար.

- մեծ դահլիճում՝ պայմանագրային, բայց ոչ պակաս 75000
դրամ

- կինոդահլիճում՝ պայմանագրային, բայց ոչ պակաս 15000 դրամ

ընդ որում՝ համայնքում գրանցված մշակութային կազմակերպությունների, ստեղծագործական խմբերի և անհատ ստեղծագործողների կողմից համերգային և զվարճանքի միջոցառումների կազմակերպման դեպքում սահմանվում է զեղչ՝ վճարի 50%-ի չափով, իսկ համայնքային ենթակայության կազմակերպությունների միջոցառումների համար դահլիճները տրամադրվում են **անվճար**

բ. հանրային և այլ միջոցառումների կազմակերպման նպատակով՝ պայմանագրային, բայց ոչ պակաս քան՝ մեկ ժամվա համար 5000 դրամ:

2) մարզադպրոցների դահլիճներում սպորտային, առողջարարական միջոցառումների և հանգստի կազմակերպման նպատակով օգտագործման տրամադրելու դեպքում՝ պայմանագրային, բայց ոչ պակաս քան՝ մեկ ժամվա համար 2000 դրամ:

4. Կապան քաղաքի մանկական կենտրոն» ՀՈԱԿ-ի ծառայություններից օգտվելու համար՝ տարեկան 3000 դրամ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 126-Ն
30 ԳԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԽՈՇՈՐ ԵԶՐԱԶԱՓԻ ԱԳՔԻ
ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԳՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԳՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, «Աղյուսահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, *Կապան համայնքի ախագանին որոշում է.*

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի վարչական տարածքում շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվության տրամադրման պայմանները և կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ (10)
 ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ
 ԱՍՐՅԱՆ ՎԱԶԵ
 ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԳԱՆ
 ԳԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ
 ԳԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՆԱՍ
 ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
 ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
 ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ
 ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

Գեմ (0)
 Ձեռնպահ (0)
 ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 30
 ք. Կապան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԽՈՇՈՐ ԵԶՐԱԶԱՓԻ ԱՂՔԻ
ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ՓՈԽԱՂՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ**

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի վարչական տարածքում համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվություն (այսուհետ՝ թույլտվություն) տրամադրելու պայմանների և կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի հիմնական հասկացություններն օգտագործվում են «Թափոնների մասին» օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:

3. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման իրականացումը պետք է կազմակերպվի՝ նվազագույնի հասցնելով շրջակա միջավայրի աղտոտումը:

4. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբը պետք է տեղադրել օրենսդրությամբ սահմանված կարգով արտոնագրված աղբավայրերում:

5. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվության տրամադրման պայմանները և կարգը ուղղված են «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված նպատակներին և սկզբունքներին և նույն օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին համապատասխան աղբահանության իրականացման ապահովմանը:

6. Թույլտվությունը տրամադրում կամ մերժում է Կապան համայնքի ղեկավարը:

7. Թույլտվություն ստանալու համար աղբահանության վճար վճարողը կամ իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը (այսուհետ՝ հայտատու) համայնքի ղեկավարին ներկայացնում է հայտ: Հայտին կից ներկայացվում է՝ սահմանված չափով տեղական վճարը վճարած լինելը հավաստող փաստաթղթի պատճենը, անձը հաստատող փաստաթղթի պատճենը, իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի պատճենը իսկ հայտատուի լիազորված անձի կողմից հայտը ներկայացվելու դեպքում, նաև լիազորագիրը կամ այլ փաստաթուղթ, որը հավաստում է ներկայացուցչի լիազորությունը:

8. Համայնքի ղեկավարը հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում պարզում է դրանց համապատասխանությունը սույն կարգի պահանջներին: Եթե հայտում առկա են ձևական սխալներ, որոնք կարող են շտկվել, ապա համայնքապետարանը մատնացույց է անում հայտատուին՝ նրան հնարավորություն ընձեռելով շտկելու այդ սխալները, կամ ինքն է շտկում դրանք՝ նախապես կամ հետագայում հայտատուին իրազեկելով այդ մասին: Եթե հայտին կից ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ապա համայնքապետարանը առաջարկում է սահմանված ժամկետում համալրել այդ ցանկը:

9. Թույլտվություն տալու մասին հայտի բավարարումը կամ մերժումը ձևակերպվում է համայնքի ղեկավարի որոշմամբ:

10. Համայնքի ղեկավարի կողմից թույլտվություն տալու մասին հայտը բավարարելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում հայտատուին տրամադրվում է թույլտվություն:

11. Թույլտվություն ստանալու մասին հայտը գրավոր մերժվում է հայտի մուտքագրման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Թույլտվություն ստանալու մասին հայտի մերժման վերաբերյալ որոշման մեջ պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու իրավական հիմքերը:

12. Թույլտվությունը չի կարող հայտատուի կողմից փոխանցվել այլ անձի կամ օգտագործվել այլ անձի կողմից:

Աշխատակազմի քարտուղար  Նկյի Շահնազարյան




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 127-Ա
30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թ.

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՑՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28)-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Կապան շահայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.
- 1) «Թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի:
- 2) «Թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:
- 3) «Թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 3 հավելվածի:
- 4) «Թիվ 5 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 4 հավելվածի:
- 5) «Թիվ 6 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 5 հավելվածի:
- 6) «Թիվ 7 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 6 հավելվածի:
- 7) «Թիվ 8 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 7 հավելվածի:



8) «Թիվ 9 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 8 հավելվածի:

9) «Թիվ 10 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 9 հավելվածի:

10) «Թիվ 11 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 10 հավելվածի:

11) «Թիվ 12 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 11 հավելվածի:

12) «Թիվ 13 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 12 հավելվածի:

13) «Արծվանիկի մանկապարտեզ» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 13 հավելվածի:

14) «Դավիթ Բեկի մանկապարտեզ» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 14 հավելվածի:

15) «Ծավի մանկապարտեզ» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 15 հավելվածի:

16) «Սյունիքի մանկապարտեզ» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 16 հավելվածի:

17) «Կապան քաղաքի Ա. Խաչատրյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 17 հավելվածի:

18) «Կապան քաղաքի թիվ 2 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 18 հավելվածի:

19) «Կապան քաղաքի թիվ 3 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 19 հավելվածի:

20) «Կապան քաղաքի արվեստի մանկական դպրոց» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 20 հավելվածի:

21) «Կապան քաղաքի գեղարվեստի մանկական դպրոց» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 21 հավելվածի:

22) «Կապան քաղաքի Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 22 հավելվածի:

23) «Կապան քաղաքի աթլետիկայի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 23 հավելվածի:

24) «Կապան քաղաքի մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 24 հավելվածի:

25) «Կապան քաղաքի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 25 հավելվածի:

26) «Կապան քաղաքի մանկական կենտրոն» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 26 հավելվածի:

27) «Կապան քաղաքի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 27 հավելվածի:

28) «Կապան քաղաքի Վազգեն Սարգսյանի անվան մանկական զբոսայգի» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 28 հավելվածի:

29) «Կապան քաղաքի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 29 հավելվածի:

30) «Կապան քաղաքի հաշվապահական ծառայությունների կենտրոն» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 30 հավելվածի:

31) «Կապան քաղաքի ակումբազբադարանային միավորում» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 31 հավելվածի:

32) «Կապանի ՊԼԱՍՏԻՆ» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 32 հավելվածի:

33) «Կապանի արվեստի թանազրան» ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 33 հավելվածի:

34) Կապան համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատությունների հաստիքացուցակը ամառային ժամանակահատվածի համար՝ համաձայն N 34 հավելվածի:

2. Որոշել կրթադաստիարակչական /մանկավարժական/ աշխատողներին ներկայացվող հետևյալ մասնագիտական պահանջներն ու կարգերի դասակարգման չափորոշիչները.

1) նախադպրոցական ուսումնական հաստատություններ՝

I կարգ – բարձրագույն մասնագիտական կրթություն և 3 տարվա մանկավարժական ստաժ
II կարգ – բարձրագույն մասնագիտական կրթություն և մինչև 3 տարվա մանկավարժական ստաժ, կամ բարձրագույն ոչ մասնագիտական կրթություն և առնվազն 5 տարվա մանկավարժական ստաժ, կամ միջնակարգ մասնագիտական կրթություն և առնվազն 5 տարվա մանկավարժական ստաժ:

2) Երաժշտական, աբվեստի, զեղարվեստի դպրոցներ և մարզադպրոցներ՝


I կարգ – բարձրագույն մասնագիտական կրթություն և 15 տարվա մանկավարժական ստաժ

II կարգ – բարձրագույն մասնագիտական կրթություն և առնվազն 3-15 տարվա մանկավարժական ստաժ, կամ բարձրագույն ոչ մասնագիտական կրթություն և առնվազն 15 տարվա մանկավարժական ստաժ, կամ միջնակարգ մասնագիտական կրթություն և առնվազն 15 տարվա մանկավարժական ստաժ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

4. Ուժը կորցրած ճանաչվի Կապան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 05-ի «Կապան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 108-Ա որոշումը, իր հետագա բոլոր փոփոխություններով:

Կողմ (10)

 ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ
 ԱՍՐՅԱՆ ՎԱՀԵ
 ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
 ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ
 ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ

 ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՆԱՍ
 ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
 ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
 ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ
 ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

 ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ


2020թ. դեկտեմբերի 30

ք. Կապան


Հավելված N 1

Կապան համայնքի ավագանու

2020թ. դեկտեմբերի 30-ի թիվ 127-Ա որոշման

<<Կապանի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ
 ատկորային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և
 պաշտոնային դրույքաչափերը

- 1 հմբերի թիվը՝ 6
- 2 Հաստիքացուցակը և պաշտոնային



Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Միավորը	Դրույքաչափը	Աշխատավարձի ֆոնդ
1	Տնօրեն	1	150,000	150,000
2	Ուսման գծով տեղակա	1	118,200	118,200
3	Գործավար	1	91,285	91,285
4	Դաստիարակ 1-ին կարգ	1.55	114,207	177,020.85
5	Երաժշտության դաստիարակ 1-ին կարգ	1.5	106,000	159,000
6	Դաստիարակ 2-րդ կարգ	6.2	108,768	674,361.6
7	Դաստիարակ	1.55	103,330	160,161.5
7.1	Դաստիարակի օգնական՝	6		538,809
7.2	Դաստիարակի օգնական	3	88,318	264,954
8	Դաստիարակի օգնական	3	91,285	273,855
9	Քուժքույր	1	88,318	88,318
10	Խոհարար	1	88,318	88,318
11	Խոհարարի օգնական	1	91,285	91,285
12	Տնտեսավար	1	88,318	88,318
13	Օժանդակ աշխատող	1	88,318	88,318
14	Լվացարար-արդուկող	1	91,285	91,285
15	Պահակ	1	91,285	91,285
16	Գազի սարքավորումների պատասխանատու	1	91,285	91,285
ԸՆԴԱՄԵՆԸ		27.8		2,787,249.95

Աշխատակազմի քարտուղար

Նելլի Շահնազարյան

Հավելված N 2
Կապան համայնքի ավագանու
2020թ. դեկտեմբերի 30-ի թիվ 127-Ա որոշման



<<Կապանի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

- 1 **Խմբերի թիվը՝ 5**
- 2 **Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝**

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Միավորը	Դրույքաչափը	Աշխատավարձի ֆունդ
1	Տնօրեն	1	150,000	150,000
2	Ուսման գծով տեղակ.սլ	1	118,200	118,200
3	Գործավար	1	91,285	91,285
4.2	Երաժշտության դաստիարակ 2-րդ կարգ	1.25	99,400	124,250
4.3	Դաստիարակ 2-րդ կարգ	4.65	108,768	505,771.2
5	Դաստիարակ	3.1	103,330	320,323.00
6	Դաստիարակի օգնական՝	5		450,491
6.1	Դաստիարակի օգնական	2	88,318	176,636
6.2	Դաստիարակի օգնական	3	91,285	273,855
7	Բուժքույր	1	91,285	91,285
8	Խոհարար	1	91,285	91,285
